

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՌԱՎԱՐ (ԴԻՍՏԱՆՅԻՈՆ) ՁԵՎՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. Հեռավար կրթությունն ապահովվում է կրթական տեխնոլոգիաների համակազմով, որոնց ժամանակ դասավանդողների և ուսանողների միջնորդավորված կամ ոչ ամբողջովին միջնորդավորված նպատակաուղղված փոխազդեցությունը իրականացվում է անկախ գտնվելու վայրից և ժամանակի բաշխումից, դասավանդողների կողմից կազմակերպված տեղեկատվական տեխնոլոգիաների և ամենից առաջ հեռուստահաղորդակցության միջոցների կիրառման միջոցով:
2. Ուսումնական հաստատությունների կողմից հեռավար կրթական տեխնոլոգիաների /այսուհետև **ՀԿՏ**/ միջոցով կրթական ծրագիրը համարվում է իրականացված, եթե ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակների (կրեդիտների) 70%-ը սովորողները յուրացնում են հեռավար տեխնոլոգիաների միջոցով: Ընդ որում, մասնագիտական կրթական ծրագրերի ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական դասընթացների առնվազն 80%-ն է իրականացվում հեռավար տեխնոլոգիաներով:
3. ՀԿՏ-ով տարվող ուսումնական գործունեության պատրաստվածությունը թույլատրվում և հաստատվում է, եթե բավարարում է հետևյալ պահանջներին.
ա) առկա են կրթական ծրագրի ուսումնամեթոդական համալիրներ, յուրաքանչյուր ուսումնական առարկայի, մոդուլի էլեկտրոնային հատուկ մուլտիմեդիական միջոցների փաթեթներ,

բ) առկա է կրթական գործընթացի վարչարարությունն ամբողջությամբ ապահովող փաստաթղթաշրջանառության (այդ թվում՝ էլեկտրոնային) հաստիկ կորպորատիվ տեղեկատվական համակարգը,

գ) առկա են նոր կրթական-տեղեկատվական միջավայրում աշխատելու համար վերապատրաստված դասավանդողներ,

դ) առկա են ուսումնառողների գիտելիքների ստուգման հաստիկ ձևեր այդ թվում՝ էլեկտրոնային):

ե) առկա են հեռահաղորդակցության հաստիկ սարքավորումներով կահավորված տարածքներ, որոնք հնարավորություն են ընձեռում բոլոր առարկաների և դասընթացների գծով ուսումնառությունը կազմակերպելու պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

4. ՀԿՏ-ով ուսուցանվող սովորողների ընդունելությունը, ինչպես նաև ուսանողների փոխադրումը, տեղափոխումը, հեռացումը և վերականգնումն ուսումնական հաստատությունն իրականացնում է ուսուցման տվյալ ձևի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Մասնագետների որակավորման և մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացման ուսումնական գործընթացը ուսումնական հաստատությունը կարող է ամբողջությամբ իրականացնել ինքնուրույն կամ մասամբ՝ իր առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի և ներկայացուցչությունների միջոցով):
6. Աշխատավայրում կամ բնակության վայրում հեռավար ձևով սովորող ուսանողների կրթական ծրագրերի յուրացմանը օժանդակելու նպատակով ուսումնական հաստատությունն իրավասու է կազմակերպել խորհրդատվություն, առաջադիմության ընթացիկ հաշվառում, միջանկյալ ատեստավորում, պրակտիկաների անցկացում գիտամանկավարժական հիմնական հաստիքային աշխատողների միջոցով՝ ներկայացուցչությունների ուսումնական բազայի հնարավորությունների կիրառմամբ:
7. Առկա ուսուցման ձևով ուսումնական գործընթացի կազմակերպման դեպքում ամբողջ ծավալով ՀԿՏ-ի կիրառմամբ կրթություն ստանալ թույլատրվում է

կրթության տվյալ ձևով ուսումնական գործընթացի կազմակերպման սահմանված պայմանների հաշվառմամբ:

8. Հեռավար ձևով կրթական գործընթացի ապահովման նպատակով տեղեկատվական ավանդական ռեսուրսների հետ միաժամանակ կիրառվում են.

ա) հատուկ մասնագիտացված դասագրքեր՝ մուլտիմեդիական ուղեկցությամբ,

բ) էլեկտրոնային ուսումնամեթոդական համալիրներ,

գ) էլեկտրոնային դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ,

դ) թրեյնինգային համակարգչային ձեռնարկներ,

ե) համակարգչային լաբորատոր պրակտիկումներ,

զ) ստուգող-թեստավորող համալիրներ,

է) ուսումնական տեսաֆիլմեր, ներկայացումներ,

ը) ձայնագրություններ,

թ) հեռուստահաղորդակցության կապի միջոցներով հաղորդման նյութեր:

9. Ուսումնական գործընթացում որպես տեղեկատվության հիմնական ռեսուրսներ օգտագործվում են հեռավար կրթության տեղեկատվական տվյալների բազայի մշակված մեթոդական (դիդակտիկ) նյութերը, որոնց կիրառման պահին իրենց ծավալով և բովանդակությամբ ապահովում են համապատասխանությունը հիմնական կրթական ծրագրերի պետական կրթական չափորոշիչների պահանջները /մակարդակը/ կամ համապատասխանում են լրացուցիչ կրթական ծրագրերի պահանջներին:

10. Հեռավար կրթության տվյալների բազան հրատարակությունների ձևով տարբեր տիպի կրիչների վրա ընդգրկում է ուսումնական և ուսումնամեթոդական հիմնական ֆոնդը:

11. Հեռավար կրթության ժամանակ ուսումնական հաստատությունը յուրաքանչյուր ուսանողի համար ապահովում է հեռավար կրթության միջոցների և տեղեկատվության հիմնական ռեսուրսների հասանելի լինելը՝ ուսումնական պլանի ժամաքանակների, համապատասխան կրթական ծրագրի

կամ նրա մասի յուրացման համար անհրաժեշտ ժամաքանակի ծավալին համապատասխան:

12. Հեռավար կրթության ժամանակ ուսումնական հաստատությունն ուսանողներին գիտական և ուսումնամեթոդական օգնություն ցուցաբերում է դասավանդողների միջոցով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառման եղանակով:
13. Ուսումնական գործընթացի ընթացիկ վերահսկողությունը և սովորողների միջանկյալ ատեստավորումը իրականացվում է ուսումնական հաստատության կողմից ավանդական մեթոդներով կամ էլեկտրոնային միջոցների կիրառմամբ (էլեկտրոնային թեստավորում)՝ ապահովելով ուսանողների անձի գաղտնիությունը:
14. Հեռավար կրթություն իրականացնող դասավանդողների անձնակազմը կարող է բաղկացած լինել.
 - ա) հաստատության պրոֆեսորադասախոսական համակազմից,
 - բ) տարբեր բնակավայրերում բնակվող, հեռահաղորդակցության միջոցներով մեթոդական և ուսուցման գործընթացը մասնաճյուղերում իրականացնող կազմակերպչական կապի մեջ գտնվող դասավանդողներից, որոնք իրականացնում են ուսուցման գործընթացը մասնաճյուղերում,
 - գ) անկախ բնակության վայրից՝ ներկայացուցչություններում հեռավար ուսուցման ձևով խորհրդատվություն, առաջադիմության ընթացիկ հաշվառում և ընթացիկ ատեստավորման գործընթացներ իրականացնող դասավանդողներից, որոնք կիրառում են հեռահաղորդակցության և այլ միջոցներ:
15. Մեկ կամ մի քանի կրթական ծրագրեր ամբողջությամբ ՀԿՏի միջոցով /կիրառմամբ/ իրականացման համար, հաստատությունը կարող է պատրաստվածության մակարդակի գնահատման նպատակով դիմել կրթության պետական կառավարման լիազոր մարմնին:
16. Լրացուցիչ կրթական ծրագրերն ամբողջ ծավալով հեռավար տեխնոլոգիաներով իրականացման պատրաստվածությունը կրթության պետական կառավարման լիազոր մարմինը հաստատում է պետական

հավատարմագրում ունեցող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների՝ ըստ կրթական ծրագրերի, մասով:

17. Ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջները հաստատում է կրթության պետական կառավարման լիազոր մարմինը, հաշվի առնելով ուսումնական հաստատության տիպը, օգտագործվող հեռավար կրթության տեխնոլոգիաների առանձնահատկությունները:
18. Ուսումնական պլաններով նախատեսված լաբորատոր և գործնական պարապմունքների իրականացման նպատակով ուսումնական հաստատությունը սովորողներին ընձեռում է պարապմունքներին մասնակցելու իրական կամ վիրտուալ հնարավորություններ:
19. Ուսումնական հաստատությունն ապահովում է պետական կրթական չափորոշիչներով հաստատված ուսումնական և արտադրական պրակտիկաների անցկացման հնարավորությունը:
20. Տեղեկատվական-հաղորդակցման տեխնոլոգիական միջոցները կիրառելիս անհրաժեշտ է ունենալ ուսումնամեթոդական համալիր: Ուսումնամեթոդական համալիրի բաղադրիչներն են ծրագրերը, ուսումնաօժանդակ նյութերը /դասախոսություն, քրեստոմատիա, բառարան, ցուցադրական նյութեր/ և թեստերը:
 - ա) Կրթական հիմնական ծրագրերով մասնագետի պատրաստման պահանջները սահմանված են պետական կրթական չափորոշիչով: Ուսումնական հաստատությունը, դրանց համապատասխան, սահմանում է առարկաների բովանդակությունը և ծավալը, ուսանողների կողմից դրանց յուրացման որակի ապահովման պայմանները և դրանց հսկողության իրականացման պահանջները:

Ծրագիրն արտացոլում է ուսումնական նյութի ծավալը, բովանդակությունը, շարադրման կառուցվածքը:
 - բ) Ուսումնական դասագիրքը /ձեռնարկը/ ներկայացնում է ծրագրի պահանջներին համապատասխանող գիտելիքները:
 - գ) Քրեստոմատիայի միջոցով ուսանողները ծանոթանում են գիտության տարբեր բնագավառներում նշանակալից ավանդ ունեցող գիտնականների

ձեռքբերումներին:

դ) Բառարանի օգնությամբ ուսանողները, ծրագրի պահանջները և քրեստոմատիայի թեմաներն ուսումնասիրելիս, ծանոթանում են անհրաժեշտ սահմանումների և բացատրական նյութերի հետ:

ե) Ցուցադրական նյութերի մեջ մտնում են սխեմաները, գծանկարները, աղյուսակները, կինո-ֆոտո-աուդիո և այլ նյութերը, որոնք ամրապնդում են ստացած տեսական և գործնական գիտելիքները:

զ) Ծրագրի կոնկրետ պահանջները արտացոլված են թեստային առաջադրանքներում: Դրանք ունեն 2 հիմնական գործառույթներ՝ հսկիչ և խթանիչ:

Դրանցից առաջինն արտաքին հսկողության ձևն է, որի օգնությամբ որոշվում է յուրացված գիտելիքների մակարդակը: Երկրորդն՝ ինքնավերահսկողության ձևն է, որի օգնությամբ ուսանողը հայտնաբերում և շտկում է սեփական գիտելիքների բացթողումները:

21. Ուսումնական հաստատությունները կազմակերպում են (ուսումնական հաստատություններում և մասնաճյուղերում) մանկավարժական և պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստում կամ որակավորման բարձրացում՝ նոր կրթական-տեղեկատվական միջավայրում դասավանդելու համար: